Քաղ. գործ թիվ ՇԴ/3824/02/21

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

<<15>> հունիսի 2021թ.

ք.Գյումրի

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

նախագահությամբ՝ դատավոր Լ.Խաչատրյանի

քարտուղարությամբ՝ Գ.Հարությունյանի

դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ դիմումի Վարդան Խաչատուրի Ավետիսյանի /այսուհետ՝ նաև Դիմումատու, Դիմող/ (ծնված՝ 20.09.1979թ., անձնագիր՝ AS0552443, տրված՝ 26.03.2019թ. 016-ի կողմից, հասցեն՝ ք.Գյումրի, Աբովյան 2 նրբ., 6 տուն)՝ անձին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին.

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Վարդան Խաչատուրի Ավետիսյանը 16.06.2021թ. դիմում է ներկայացրել դատարան՝ խնդրելով անհայտ բացակայող ճանաչել որդուն՝ 26.08.2001թ.-ին ծնված Խաչատուր Վարդանի Ավետիսյանին:

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 24.06.2021թ. որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ:

2. Դիմումատուի իրավական դիրքորոշումը.

Դիմելով դատարան՝ Վարդան Խաչատուրի Ավետիսյանը հայտնել է, որ 2020թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով Խաչատուր Վարդանի Ավետիսյանը (ծնված՝ 26.08.2001թ., հաշվառված՝ ք.Գյումրի, Աբովյան 2 նրբ., 6 տուն) մասնակցել է մարտական գործողություններին՝ որպես պարտադիր ժամկետային զինծառայող (զորակոչման ամսաթիվ՝ 07.01.2020թ., զինվորական ծառայության անցկացման վայր՝ ՀՀ Մեղրի, այնուհետև՝ Ջաբրայիլ):

Մարտական գործողությունների ընթացքում Խաչատուր Վարդանի Ավետիսյանի գտնվելու վայրի վերաբերյալ վերջին տեղեկությունները ստացվել են 17.10.2020թ.-ին: Նշված ամսաթվից հետո Խաչատուր Ավետիսյանի հետ որևէ կապ հաստատել հնարավոր չի եղել և մինչ օրս նրանից որևէ տեղեկություն չկա:

Հաշվի առնելով պատերազմի ողբերգական ընթացքը, Խաչատուր Վարդանի Ավետիսյանի հետ 2020թ. հոկտեմբերի 17-ից ի վեր կապ հաստատելու անհնարինությունը, ակնհայտ է, որ Խաչատուր Ավետիսյանի կարգավիճակի

անորոշությունը բացասաբար է անդրադառնում Դիմումատուի քաղաքացիական իրավունքների իրականացման վրա, մասնավորապես՝ Խաչատուր Ավետիսյանին անհայտ բացակայող ճանաչելն անհարժեշտ է ապահովելու համար վերջինիս իրավական կարգավիճակի հստակեցման և վերջինիս ընտանիքի անդամների սոցիալական երաշխիքների կիրառման գործընթացն ապահովելու համար:

Նկատի ունենալով, որ թեև Խաչատուր Ավետիսյանի ընտանիքի անդամների համար մեծ ցավ է Խաչատուրի անհետանալը, բայց վերը նշված դիտարկումները պետք է ընդունվեն որպես վերջինիս անհայտ բացակայող ճանաչվելու համար բավարար փաստ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 44 հոդվածի պահանջներով՝ Դիմողը դատարանից խնդրել է որդուն՝ 26.08.2001թ.-ին ծնված Խաչատուր Վարդանի Ավետիսյանին, ճանաչել անհայտ բացակայող:

26.07.2021թ. Հայցվորի ներկայացուցիչը դատարան է ներկայացրել միջնորդություն, որով խնդրել է գործով կայացվելիք վճիռը համարել օրինական ուժի մեջ մտած հրապարակման պահից:

<u>3.Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերն են.</u>

1. Դիմումատու Վարդան Խաչատուրի Ավետիսյանի անձնագրի պատճենը (ծնված՝ 20.09.1979թ., անձնագիր՝ AS0552443, տրված՝ 26.03.2019թ. 016-ի կողմից, հասցեն՝ ք.Գյումրի, Աբովյան 2 նրբ., 6 տուն):

2. Խաչատուր Վարդանի Ավետիսյանի նույնականացման քարտի պատճենը (ծնված՝ 26.08.2001թ., քարտի համար՝ 010528255, տրված՝ 23.08.2019թ. 016-ի կողմից):

3. Թիվ ԱԱ 309006 ծննդյան վկայականի համաձայն՝ Խաչատուր Վարդանի Ավետիսյանը ծնվել է 26.08.2001թ.-ին: Ծնողներն են. հայրը՝ Վարդան Խաչատուրի Ավետիսյանը, մայրը՝ Թանգանուշ Բաբկենի Կարապետյանը:

4. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման կողմից 13.04.2021թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Վարդան Խաչատուրի Ավետիսյանի որդին՝ ժամկետային զինծառայող՝ 26.08.2001թ. ծնված Խաչատուր Վարդանի Ավետիսյանը ԼՂՀ-ում պատերազմական գործողությունների ժամանակ, ըստ ՀՀ ՊՆ թիվ 1114-Լ հրամանով ստեղծված հանձնաժողովի նախագահի կողմից և ՀՀ ՊՆ ԶԱՍՊ և ՎՀ գլխավոր վարչության միջոցով իրենց տրամադրված անվանացուցակների համաձայն՝ վերջինիս գտնվելու վայրը համարվում է անհայտ:

5. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից 08.07.2021թ. տրված գրությամբ հայտնվել է, որ քաղաքացի Խաչատուր Ավետիսյանի վերջին հայտնի բնակության վայրի մասին Գյումրու համայնքապետարանը տեղեկություն չունի:

6. ՀՀ ԱՆ Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնի պետի կողմից 15.07.2021թ. տրված գրության համաձայն՝ ՔԿԱԳ գործակալության միասնական քաղվածքում 26.08.2001թ. ծնված Խաչատուր Վարդանի Ավետիսյանի վերաբերյալ որևէ տեղեկություն չի հայտնաբերվել:

7. ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի 26.07.2021թ. գրության համաձայն՝ 26.08.2001թ. ծնված Վարդան Խաչատուրի Ավետիսյանի նկատմամբ ՀՀ ոստիկանության Մուշի բաժնում երբևէ հետախուզում չի հայտարարվել, դատապարտված չի եղել, նրա վերաբերյալ վարկաբեկիչ նյութեր և տեղեկություններ առկա չեն: Կատարված ստուգումներով Խաչատուր վարդանի

Ավետիսյանի գտնվելու վայրը պարզել հնարավոր չի եղել:

8. ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի կողմից 21.07.2021թ. տրված գրության համաձայն՝ ըստ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տվյալների՝ Խաչատուր Վարդանի Ավետիսյանին Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային ծառայության կողմից 23.08.2019թ. տրվել է թիվ 010528255 նույնականացման քարտը: Խաչատուր Ավետիսյանը 11.02.2020թ. հաշվառված է ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ծարավ աղբյուրի փող., 52 շենք հասցեում:

4.Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Ուսումնասիրելով դիմումը, հետազոտելով գործում եղած գրավոր ապացույցները, գնահատելով դրանք իրենց համակցությամբ՝ Դատարանը գտնում է, որ Դիմողի պահանջը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Դիմելով դատարան Վարդան Խաչատուրի Ավետիսյանը հայտնել է, որ որդին մասնակցել է Արցախյան պատերազմին և նրա մասին 17.10.2020թ.-ից որևէ տեղեկություն չկա: Խնդրել է որդուն ճանաչել անհայտ բացակայող:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին: Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ այլ քաղաքացին կարող է դատարանի կողմից անհայտ բացակայող ճանաչվել, եթե երեք ամսվա ընթացքում տեղեկություններ չկան զինծառայողի կամ այլ քաղաքացու գտնվելու վայրի մասին:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացման օրը որոշելու անհնարինության դեպքում անհայտ բացակայող ճանաչելու համար ժամկետի հաշվարկի սկիզբ է համարվում այն ամսին հաջորդող ամսվա մեկը, երբ ստացված են եղել բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունները, իսկ եթե հնարավոր չէ որոշել այդ ամիսը, ապա՝ հաջորդ տարվա հունվարի մեկը:

ՀՀ Կառավարությունը 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 2001-Լ որոշմամբ հաստատել է Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքների աջակցության միջոցառումը՝ համաձայն հավելվածի: Որոշման իմաստով անհայտ կորած են համարվում Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով Հայաստանի Հանրապետության պաշտպանության, արտակարգ իրավիճակների նախարարություններում, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում կամ ոստիկանությունում գրանցված՝ գտնվելու վայրն անհայտ անձինք, որոնց վերաբերյալ առկա չէ տեղեկատվություն զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելու կամ դասալքության կամ կամովին գերի հանձնվելու կամ մարտադաշտն ինքնակամ լքելու մասին:

ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման կողմից 13.04.2021թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Վարդան Խաչատուրի Ավետիսյանի որդու՝ ժամկետային զինծառայող 26.08.2001թ. ծնված Խաչատուր Վարդանի Ավետիսյանի, գտնվելու վայրը համարվում է անհայտ:

Դատարանը Խաչատուր Վարդանի Ավետիսյանի գտնվելու վայրը ճշտելու կապակցությամբ կատարել է համապատասխան հարցում ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը, որին ի պատասխան հայտնվել է, որ ըստ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տվյալների՝ Խաչատուր Վարդանի Ավետիսյանին Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային ծառայության կողմից 23.08.2019թ. տրվել է թիվ 010528255 նույնականացման քարտը: Խաչատուր Ավետիսյանը 11.02.2020թ. հաշվառված է ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ծարավ աղբյուրի փող., 52 շենք հասցեում:

ՀՀ ԱՆ Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնի պետի կողմից 15.07.2021թ. տրվել է գրություն այն մասին, որ համաձայն ՔԿԱԳ գործակալության միասնական քաղվածքում 26.08.2001է. ծնված Խաչատուր Վարդանի Ավետիսյանի վերաբերյալ որևէ տեղեկություն չի հայտնաբերվել:

ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի 26.07.2021թ. գրությամբ հայտնվել է, որ 26.08.2001թ. ծնված Վարդան Խաչատուրի Ավետիսյանի նկատմամբ ՀՀ ոստիկանության Մուշի բաժնում երբևէ հետախուզում չի հայտարարվել, դատապարտված չի եղել, նրա վերաբերյալ վարկաբեկիչ նյութեր և տեղեկություններ առկա չեն: Կատարված ստուգումներով Խաչատուր վարդանի Ավետիսյանի գտնվելու վայրը պարզել հնարավոր չի եղել:

Խաչատուր Վարդանի Ավետիսյանի գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություններ չի հայտնաբերվել նաև ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի համայնքապետարանի կողմից:

Խաչատուր Վարդանի Ավետիսյանի գտնվելու վայրը ճշտելու համար Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում տեղադրվել է հաղորդագրություն՝ Խաչատուր Վարդանի Ավետիսյանին անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ գործ հարուցված լինելու մասին, սակայն որևէ անձից արձագանք Դատարանը չի ստացել:

Վերը թվարկված ապացույցների հիման վրա Դատարանը հաստատված է համարում, որ 26.08.2001թ. ծնված Խաչատուր Վարդանի Ավետիսյանը մասնակցել է Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողություններին և 17.10.2020թ.-ից տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին:

Դատարանը հաստատված է համարում նաև, որ Խաչատուր Վարդանի Ավետիսյանը հետախուզման մեջ չի գտնվում:

Հայցվորի ներկայացուցիչը հայտնել է, որ Խաչատուր Վարդանի Ավետիսյանին անհայտ բացակայող ճանաչելն անհարժեշտ է վերջինիս իրավական կարգավիճակի հստակեցման և նրա ընտանիքի անդամների սոցիալական երաշխիքների կիրառման գործընթացն ապահովելու համար:

Վերոշարադրյալ հանգամանքներից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ դիմումը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Հայցվորի ներկայացուցիչը խնդրել է կայացվելիք դատական ակտը համարել օրինական ուժի մեջ մտած հրապարակման պահից, քանի որ այդ չանելը ծանր հետևանքներ կառաջացնի դիմողի համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ վճիռը բացառիկ դեպքերում կարող է հրապարակման պահից հայտարարվել օրինական ուժի մեջ մտած, եթե դա չանելն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ գործին մասնակցող անձի համար:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունը, Դատարանը գտնում է, որ սույն վճիռը պետք է համարել օրինական ուժի մեջ մտած հրապարակման պահից:

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ Դատարանը գտնում է, որ այդ հարցը պետք է համարել լուծված, քանի որ պետական տուրքի մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 29-րդ կետի համաձայն՝ Դիմողը ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողին կամ այլ քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ գործերով ազատված է պետական տուրքի վճարումից:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Վարդան Խաչատուրի Ավետիսյանի դիմումը բավարարել՝ 26.08.2001թ.-ին ծնված Խաչատուր Վարդանի Ավետիսյանին ճանաչել անհայտ բացակայող:
2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:
4. Վճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ << 30>> հուլիսի 2021թ.

ԴԱՏԱՎՈՐ՝ **Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ
ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՈՒՆԸ
ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ

ՍԵՌԸ
Ա

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՎԵԼ Է
20.09.1979

ՏՐՎԵԼ Է
26.03.2019

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ
016

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՎԵՐՄԱՆԱՆ Է ՄԻՆՉԵՎ
26.03.2029

ԱՆՁՆԱԳՐԻ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ/SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

TYPE
P

COUNTRY CODE
ARM

PASSPORT No.
AS0552443

SURNAME(S)
AVETISYAN

NAME
VARDAN

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
20 SEP 1979

PERSONAL No.

SEX
M

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
26 MAR 2019

DATE OF EXPIRY
26 MAR 2029

AUTHORITY
016

P<ARMAVETISYAN<<VARDAN<<<<<<<<<<<<<<<<<<<<<<
AS0552443 9ARM7909205M2903264<<<<<<<<<<<<<<00

ԱՆՁՆԱԳԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅՈՒ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ,
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ.

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN
COUNTRIES UNTIL:

01. 04. 2021

ՆՇՈՒՄՆԵՐ · OBSERVATIONS

Հ. Գյումրի 816
Հերթյան 2 նրբ. տուն 6
«23» 05 1966 Ա. Դեմի
հանգամանքներում

AS0552443